ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/39

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Բողոք բերող՝ «Հարություն Վարոսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Մասնակից) կողմից 06.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ համարել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի 03.03.2020թ.-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը և պարտավորեցնել «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 34-րդ չափաբաժնի մասով համարել անբավարար:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.03.2020թ.-ին, 09.03.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/39 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

17.03.2020թ.-ին և 27.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.03.2020թ.-ին:

2. <u>«Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ն 06.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վանաձորի Թիվ 1 Պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կարիքների համար «բժշկական պարագաներ և սարքավորոիմների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցմամբ Ընթացակարգի շրջանակներում 34-րդ չափաբաժնի մասով, այն է «Աուտոռեֆ-կեռատոմետր» հայտ են ներկայացրել 2 մասնակից «Ա/Ձ Հարություն Վարոսյան»-ը և «Յունիմեդ հայ-ռոաակաե ՀՁ» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման և գնահատման նիստում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջարկել է «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին պարզաբանել և շտկումներ կատարել իր կողմից հայտով ներկայացված հավելված թիվ 1.1-ում:

Որից հետո «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացում շտկել է անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 03.03.2020թ.-ին տեղեկագրում հրապարակել է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 3-ը, ըստ որի

«Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն շրկել է փաստաթուղթը և գնահատվել Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ձևով Ընթացակարգի թիվ 34 չափաբաժնով հրավերի պահանջներին համապատասխանող և առավել միավորներ ստացած մասնակից:

Պատվիրատուն 03.03.2020թ.-ին հրապարակել է տեղեկագրում պայմանագիր կնքելու մասին որոշումը և թիվ 34 չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչում «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին: Անգործության ժամկետ սահմանելով 5 օրացուցային օր:

ՀՀ կառավարության 04 մայիս 2017թ.-ի N 526 որոշման 40-րդ կետի 4-րդ հոդվածի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գնահատում ենք, որ առնվազն այս մասով գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել խախտումներ: Քանի որ «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված թիվ 1.1-ում թիվ 34 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «Վանաձորի Թիվ 1 Պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից հրապարակված հրավերի պահանջներին:

1. «Վանաձորի Թիվ 1 Պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կարիքների համար «բժշկական պարագաներ և սարքավորումների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցմամբ Ընթացակարգի հրավերում թիվ 34-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է հետևյալ կերպ.

հրավերով նախատեսված չափարաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանում*	*Տեխնիկական բնութագիր*

34	*33121160*	*Աուտոռեֆ-կեռատոմետր*	*Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալներր տպելու հնարավորություն: Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալներր տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն՝ բացառելով ավելորդ լուսավորումը: 5,7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր (նվազագույն անկյունը 40°) նաև կողմնային-վերև (նվազագույն անկյունը 30°), թեքման հնարավորություն: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D...+22D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրիկ (CIL) 0±10D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1): Բբի նվազագույն տրամագիծ 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-10 մմ/քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 33.75D - 67,5D n= 1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0...-15D առանցքի անկյուն Ie - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազահույն տիրույթ 2,0 - 8,5 մմ: Լարումը 100-240 Վ, հաճախություն՝ 50-60 Հց հզորություն, 60Վտ թերմոտպի:*

2. «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սարքի ու հրավերում սարքի տեխեիկական բնութագրերում ևս առկա են անհամապատասխանություն:

Այժմ ներկայացնենք կոնկրետ անհամապատասխանությունները հրավերի ու ներկայացված սարքի.

ա. պետք է լինի Մոնիտորի դեպի վեր (նվազագույն անկյունը 40°) նաև կողմնային-վերև (նվազագույն անկյունը 30°) թեքման հնարավորություն, սակայն ներկայացվել է մոնիտորի դեպի վեր նաև կողմնային-վերև թեքման հնարավորություն +/-15մմ, մոնիտորը շարժական չէ,

բ. մեզոպիկ բբի դիամետրի որոշման և տվյալները տպելու հնարավորություն (այս հնարավորության դեպքում, սարքը պետք է ներսից կարողանա փոփոխել լուսավորությունը, որպեսզի համապատասխանի ցերեկային և մթնշաղային լուսավորվածության և նոր չափի, որը չունի հաղթած սարքը ըստ այդմ նման տվյալներ չի կարող տպել),

գ. մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն (հաղթած սարքը չի որոշում մոտիկի միջբբային հեռավորությունը, ըստ այդմ չի կարող տպել),

դ. պետք է լինի վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ, ներկայացվել է՝ վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5,15մմ, սակայն տվյալ կազմակերպության կողմից ներկայացված սարքը ունի 0, 10, 12,13.75, 15,

ե. «Յունիմեդ հայ-ռոաական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «CRK-I» մոդելը համապատասխանում է Չինական արտադրության «Huvitz shanghai» ընկերությանը՝

«Charops» բրենդով, մինչդեռ «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն սարքը վերագրել են Կորեական արտադրության «Huvitz» ընկերությանը:»:

Ելնելով վերոգրյալից, «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ խնդրել է չեղյալ համարել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի 03.03.2020թ.-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը և պարտավորեցնել «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 34-րդ չափաբաժնի մասով համարել անբավարար:

3. <u>«Վանաձորի Թիվ 1 Պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 10.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Վանաձորի Թիվ 1 Պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի կողմից 06.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Պատվիրատուն 13.03.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն 2020 թ.-ի փետրվարի 2-ին հայտարարել է Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգ: Հրավերի թիվ 34 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացվել է ընկերությանը անհրաժեշտ սարքավորմանը համապատասխան բնութագիր:

Չափաբաժին	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*

34	Աուտոռեֆ-կեռատոմետր	Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 5,7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր(նվազագույն անկյունը 40°) նաև կողմնային-վերև(նվազագույն անկյունը 30°) թեքման հնարավորություն: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D…+22D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրիկ (CIL) 0 ±10D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°): Բբի նվազագույն տրամագիծը 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-10 մմ / քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 33.75D - 67,5D n=1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազահույն տիրույթ 2,0 – 8,5 մմ: Լարումը 100-240 Վ հաճախություն 50-60Հց հզորություն: 60Վտ թերմոտպիչ:

Քանի որ ՀՀ գնումների մասին օրենքի 13 հոդվածի 5-րդ կետով <Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց>, Ընթացակարգի հրավերում հղում է օգտագործվել <կամ համարժեք> բառը:

27.02.2020թ.-ին կայացած Ընթացակարգին թիվ 34 <Աուտոռեֆ-կեռատոմետր> չափաբաժնին հայտ են ներկայացրել Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ն /1292000 դրամ/ և Հարություն Վարոսյան Ա/Ձ-ն /2791800 դրամ/:

Չափաբաժին	Անվանում /Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ի առաջարկած/	Տեխնիկական բնութագիր
34	Աուտոռեֆ-կեռատոմետր	Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր նաև կողմնային-վերև թեքման հնարավորություն +/- 15մմ Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ Սֆերիկ (Sph) -30D…+25D 0.01, 0.12 և 0.25 քայլերով ցիլինդրիկ (CIL) 0 ±12D 0.01, 0.12 և 0.25 քայլերով ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°) Բբի նվազագույն տրամագիծը 2մմ Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-13 մմ / քայլ 0.01 Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 25.96D - 67,5D n=1.3375 Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով Բբի դիամետրի չափման նվազահույն տիրույթ 2,0 – 14.0մմ Լարումը 100-240 Վ հաճախություն 50-60Հց հզորություն: 60Վտ թերմոտպիչ:

Քանի որ նշված սարքավորման համարժեքության ապացուցումը դժվարություններ առաջացրեց հանձնաժողովի կազմում, հանձնաժողովը որոշեց լրացուցիչ պարզաբանումներ պահանջել Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ից հրավերի հավելված 1.1 տեխնիկական բնութագիրի նկարագրի վերաբերյալ:

Հանձնաժողովը համաձայն 2017 թ.-ի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշման 41-րդ կետի նիստը կասեցրել է և հանձնաժողովի քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը պարզաբանել և հիմնավորել համարժեքությունը:

02.03.2020 թ.-ին գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ 34 <Աուտոռեֆ-կեռատոմետր> չափաբաժնի վերաբերյալ պարզաբանումը և վերլուծելով համարժեքությունը հաղթող է ճանաչել Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ-ին որպես համարժեք սարքավորում ներկայացրած և ցածր գին առաջարկած կազմակերպություն:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 19.02.2020թ.-ին հայտարարվել է «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 34-րդ բաժնով գնման առարկա է հանդիսանում «Աուտեռեֆ-կեռատոմետր» սարքը հետևյալ տեխնիկական բնութագրով.

Չափաբաժին	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*
34	*Աուտոռեֆ-կեռատոմետր*	*Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 5,7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր(նվազագույն անկյունը 40°) նաև կողմնային-վերև(նվազագույն անկյունը 30°) թեքման հնարավորություն: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D…+22D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրիկ (CIL) 0 ±10D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°): Բբի նվազագույն տրամագիծը 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-10 մմ / քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 33.75D - 67,5D n=1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազահույն տիրույթ 2,0 – 8,5 մմ: Լարումը 100-240 Վ հաճախություն 50-60Հց հզորություն: 60Վտ թերմոտպիչ:*

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 34-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ թիվ 34-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիրը կարիք ունի լրացուցիչ պարզաբանման և համարժեքության հիմնավորման:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը նիստը կասեցրել է և քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը պարզաբանել և շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 02.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հրավերով սահմանված ժամկետում՝ «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 34-րդ չափաբաժնի մասով ստացվել է պարզաբանում:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ընթացակարգի թիվ 34-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին:

03.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշվել է հետևյալը՝

34	*Աուտոռեֆ-կեռատոմետր*	*Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր նաև կողմնային-վերև թեքման հնարավորություն +/-15մմ: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D…+25D 0.01, 0.12 և 0.25 քայլերով: Ցիլինդրիկ (CIL) 0 ±12D 0.01, 0.12 և 0.25 քայլերով: Ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°): Բբի նվազագույն տրամագիծը 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-13 մմ/քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 25.96D - 67,5D n=1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազագույն տիրույթ 2.0–14.0մմ: Լարումը 100-240 Վ, հաճախություն 50-60 Հg հզորություն: 60Վտ թերմոտպիչ:*

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի կողմից 06.03.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով

նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է

մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 19.02.2020թ.-ին հայտարարված «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 34-րդ չափաբաժնով

գնման առարկա հանդիսացող «Աուտեռեֆ-կեռատոմետր» սարքի համար նախատեսված տեխնիկական բնութագիրը սահմանված է հետևյալ կերպ.

Չափաբաժին	Անվանում	Տեխնիկական բնութագիր
34	Աուտոռեֆ-կեռատոմետր	Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 5,7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր(նվազագույն անկյունը 40°) նաև կողմնային-վերև(նվազագույն անկյունը 30°) թեքման հնարավորություն: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D…+22D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրիկ (CIL) 0 ±10D 0,12 և 0,25 քայլերով ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°): Բբի նվազագույն տրամագիծը 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-10 մմ / քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 33.75D - 67,5D n=1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազահույն տիրույթ 2,0 – 8,5 մմ: Լարումը 100-240 Վ հաճախություն 50-60Հց հզորություն: 60Վտ թերմոտպիչ:

Հանձնաժողովի 27.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ թիվ 34-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիրը կարիք ունի լրացուցիչ պարզաբանման և համարժեքության հիմնավորման, ինչով պայմանավորված նիստը կասեցվել է և տեղեկացվել է մասնակցին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը պարզաբանել և շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 02.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հրավերով սահմանված ժամկետում՝ «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 34-րդ չափաբաժնի մասով ստացվել է պարզաբանում, ինչով պայմանավորված թիվ 34-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին:

03.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշվել է հետևյալը՝

34	*Աուտոռեֆ-կերատոմետր*	*Բարձրորակ ավտոմատ ռեֆրակտոմետր-կերատոմետր: Ֆոտոպիկ և մեզոպիկ բբի դիամետրերի որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Հեռվի և մոտի միջբբային հեռավորության որոշման և տվյալները տպելու հնարավորություն: Չափող պատուհանի լրացուցիչ կողմնային թևերով պաշտպանվածության հնարավորություն բացառելով ավելորդ լուսավորումը: 7 դյույմ գունավոր մոնիտոր կառավարման սենսորային համակարգով: Մոնիտորի դեպի վեր նաև կողմնային-վերև թեքման հնարավորություն +/-15մմ: Վերտեքսային հեռավորություններ 0, 10, 12, 13.5, 15 մմ: Սֆերիկ (Sph) -30D…+25D 0.01, 0.12 և 0.25 քայլերով: Ցիլինդրիկ (CIL) 0 ±12D 0.01, 0.12 և 0.25 քայլերով: Ցիլինդրի առանցք 0-180°(քայլ 1°): Բբի նվազագույն տրամագիծը 2մմ: Եղջերաթաղանթի կորության շառավիղ 5-13 մմ/քայլ 0.01: Եղջերաթաղանթի ռեֆրակցիան 25.96D - 67,5D n=1.3375: Եղջերաթաղանթային աստիգմատիզմ 0…-15D առանցքի անկյուն 1° - 180° 1° քայլով: Բբի դիամետրի չափման նվազագույն տիրույթ 2.0–14.0մմ: Լարումը 100-240 Վ, հաճախություն 50-60 Հց հզորություն: 60Վտ թերմոտպիչ:*

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել չեղյալ համարել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական

պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի 03.03.2020թ.-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքի վերոնշյալ պահանջն անհիմն է, քանի որ Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Դեզսերվիս» ՍՊԸ-ին 7-րդ և 31-րդ, «Լևոն ԵՎ Լամարա դեղատուն» ՍՊԸ-ին 16-րդ և 19-րդ, «Խաչպար» ՍՊԸ-ին 10-րդ, 21-րդ, 22-րդ, 29-րդ, 30-րդ, «ԷսԶեթ ֆարմա» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ, «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին 37-րդ, «Լեյկո» ՍՊԸ-ին 8-րդ, 11-15-րդ, «ԱՄ Մեդիքալ Գրուպ» ՍՊԸ-ին 24-րդ, «Գևորգ Հովհաննիսյան» Ա/Ձ-ին 4-6-րդ, «Վիոլա» ՍՊԸ-ին 3-րդ, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին 25-րդ, 26-րդ, 32-րդ և 33-րդ, «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ին 35-րդ և 36-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող /ընտրված/ մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի կայացված որոշումը իրավաչափ է, բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, որպիսի պայմաններում թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը ենթակա չէ ամբողջությամբ փոփոխման:

Ուսումնասիրելով «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից 34-րդ չափաբաժնի մասով հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածով ներկայացված մատակարարվելիք ապրանքի ամբողջական նկարագիրը, համադրելով այն Հրավերի թիվ 1 հավելվածում առկա տեխնիկական բնութագրին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առկա են անհամապատասխանություններ: Նման պայմաններում Հանձնաժողովի կողմից «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին ներկայացված մինչև կասեցման ժամկետի ավարտը հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու վերաբերյալ առաջարկը չի բխում Կարգի որևէ իրավական կարգավորումից, քանի որ հայտում առկա տվյալները ենթակա են շտկման Կարգի 41-րդ կետի դրույթների հիման վրա, այն է՝ պետք է հայտում արձանագրվի անհամապատասխանություն (ներ) հրավերի պահանջների և պայմանների նկատմամբ:

Ի հակադրումն վերոնշյալների, Հանձնաժողովը, մասնակցին առաջարկել է պարզաբանել առկա անհամապատասխանությունների մասին, ի հավաստումն որի, «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր իսկ կազմակերպության կողմից հաստատված պարզաբանում՝ ապրանքի համարժեքության մասին, որը Հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես շտկում:

Այն դեպքում, երբ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տվյալների իսկության նկատմամբ հիմնավոր կասկած ունենալու դեպքում պետք է ոչ թե առաջարկեր ներկայացնել պարզաբանում, այլ, ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի դրույթներով սահմանված պահանջներով կարող էր ստուգել դրանք՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ՝ նշվածի մասին կայացնելով պատճառաբանված որոշում (արձանագրություն):

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պատվիրատուն 13.03.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ 34-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համարժեքության ապացուցումը դժվարություններ է առաջացրել Հանձնաժողովի համար, այդ իսկ պատճառով պարզաբանում է պահանջվել մասնակցից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից 02.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման հիման վրա վերջինիս հայտի բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը ոչ իրավաչափ է, չի բխում Կարգի 41-րդ և 67-րդ կետերով սահմանված դրույթներից:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ «Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ պարտավորեցնելու «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 34-րդ չափաբաժնի մասով անբավարար համարելու մասին պահանջն անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներով և առաջարկեր «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերոնշյալ գործողություններն իրականացնելուց հետո՝ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում, նոր միայն հնարավոր է «Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 34-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ ապահովելու համար Կարգի 42-րդ կետի դրույթները, համաձայն որոնց՝ եթե նույն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է

բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է…:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հարություն Վարոսյան» Ա/Ձ-ի կողմից 06.03.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/39 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**